ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ (1946-80ԱԿԱՆՆԵՐ)

ԱՍՏՂԻԿ ՅԱԿՈԲԵԱՆ
astghikhakobyann@gmail.com

ՄՈՒՏՔ

Իրանի, ինչպէս նաեւ Սփիւռքի միւս հայօճախների հասարակական-քաղաքական կեանքի կարեւոր իրադարձութիւններից էր հայրենադարձութիւնը: Սփիւռքահայերի զանգուածային հայրենադարձութեան պատճառների թւում կարեւորւում էին մի շարք երկրներում հայերի տնտեսական ու քաղաքական ծանր վիճակը եւ Հայաստանի կառավարութեանն ուղղուած նրանց դիմումները՝ վերսկսելու 1936ին ընդհատուած հայրենադարձութիւնը[1]:

Սոյն աշխատանքում լուսաբանելով մեր հետաքրքրութեան շրջանակն ընդգրկող իրանահայերի հայրենադարձութիւնը՝ Հայաստանի ազգային արխիւում պահպանուող փաստաթղթերի եւ հրապարակում առկայ գրականութեան հիման վրայ ներկայացրել ենք պատմականօրէն ստեղծուած նպաստաւոր պայմանների արդիւնքում արտասահմանեան երկրներից հայերի՝ հայրենիք վերադառնալու հնարինութիւնը, ցոյց տուել Իրանի տարբեր քաղաքներում հայրենադարձութեան կազմակերպմանն օժանդակելու նպատակով ձեւաւորուած յանձնախմբերի անխոնջ աշխատանքը, մեկնաբանել Իրանի կառավարութեան հանդուրժողական վերաբերմունքի եւ դրա հակոտնեայ՝ յարուցած դժուարութիւնների որոշ դրսեւորումներ, տալով այդ իրողութիւնների վերաբերեալ մեր գնահատականը:

Կատարած ուսումնասիրութիւնների հարուստ յենքի վրայ ներկայացրել ենք հայրենադարձուած իրանահայերի թուային տուեալները, նկարագրել Իրանի հայօճախն ընդգրկող գաւառներում, քաղաքներում ու գիւղերում տեղի ունեցած ժողովրդագրական փոփոխութիւնները:

1946-49Ի ՄԵԾ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Բ. աշխարհամարտում Խորհրդային Միութեան յաղթանակը հնարաւորութիւն տուեց կազմակերպել արտասահմանի հայերի զանգուածային հայրենադարձութիւնը:

1945ի գարնանից, երբ պատերազմը դեռ չէր աւարտուել, բայց ԽՍՀՄի յաղթանակն ակներեւ էր, սկսուել էր մեծ հայրենադարձութեան նախապատրաստութիւնը:

---

[1] 1921-36՝ տարբեր երկրներից Խորհրդային Հայաստան ներգաղթեց շուրջ 42,286 հայ (Յ. Մելիքսէթեան, *Արեւմտահայերի բռնագաղթը եւ սփիւռքահայերի հայրենադարձութիւնը Սովետական Հայաստան (1915-1940 թթ.)*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1975, էջ 270):

Խորհրդային Հայաստանի ղեկավարները, ոգեւորուած նոր եւ աւելի զանգուածային ներգաղթ կազմակերպելու հնարաւորութիւնից, ջանում էին համոզել Ստալինին եւ նրա շրջապատին, որ օր առաջ սկսուի հայերի հայրենադարձութիւնը: Ստալինը չէր շտապում, քանզի լաւ գիտէր, որ պատերազմից նոր դուրս եկած երկիրն ի վիճակի չէ ներգաղթողների զանգուածային ներհոսք ընդունել: Բայց միւս կողմից մարդկային այդ հոսքը պէտք էր ցոյց տալու համար, թէ որքան գրաւիչ է Խորհրդային Միութիւնը, որ հազարաւոր մարդիկ ձգտում են գալ եւ մշտական բնակութիւն հաստատել այնտեղ: Այդ իմաստով հայերը եզակի չէին. ԽՍՀՄ էին վերադառնում նաեւ ռուսներ, ուկրայնացիներ եւ այլ ազգութեան պատկանողներ:

Հայրենադարձութեան մեկնարկի ազդանշանն արդէն տրուել էր: Սփիւռքի հայօճախներում քննարկւում էր հայկական հողերը Խորհրդային Հայաստանին միացնելու հեռանկարը: Համազգային այդօրինակ մեծ ձեռնարկից ետ կանգնելը մեծ վնաս կը հասցնէր ԽՍՀՄ հեղինակութեանը[2]:

Հարցի բոլոր կողմերը քննարկելուց յետոյ Ստալինն, այդուամենայնիւ, որոշեց 1945 Նոյեմբերի 21ին՝ Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 25ամեակին ընդառաջ, արտօնել հայերի հայրենադարձութիւնը՝ ստորագրելով որոշում:

Հայերի 1946-49ի հայրենադարձութեան վերաբերեալ 1950 Յուլիսի 20ի համառօտ տեղեկանքում նշւում է, որ Բ. աշխարհամարտի մեծ պատերազմի յաղթական աւարտից յետոյ, ի նշանաւորումն Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման 25ամեակի, ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհուրդը ընդունեց իր պատմական որոշումը (1945 Նոյեմբերի 21, թիւ 2947)՝ հազարաւոր հայերի՝ իրենց հայրենիք Խորհրդային Հայաստան վերադառնալու խնդրանքը բաւարարելու համար[3]:

ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհուրդը 1946 Փետրուարի 22ին ընդունեց նոր որոշում՝ «Հայերի՝ արտերկրից Խորհրդային Հայաստան վերաբնակեցման գործնական միջոցառումների մասին»: Վերոյիշեալ երկու որոշումներն էլ ստորագրուած էին Ստալինի կողմից[4]:

Այս որոշումներին համապատասխան՝ ՀԽՍՀ ժողովրդական կոմիսարների խորհուրդը 1946 Մարտի 2ի որոշմամբ իր լիազօրներին նշանակեց՝ Խորհրդային Հայաստան հայերի ներգաղթի գործնական կազմակերպման համար արտասահման գործուղուելու համար: Իրան գործուղուեցին Ռուբէն Տիգրանի Քալանթարը եւ Ռուբէն Իւանի Ղազարեանը[5]:

---

[2] https://hayrenadardz.org/hy/history/1946-49 (մատչում՝ 19.09.2023):

[3] Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ), ֆ. 326, ց. 1, գ. 231, թ. 17:

[4] Նոյն:

[5] Նոյն:

ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր ստեղծուել էր Ներգաղթող հայերի ընդունման եւ տեղաւորման կոմիտէ[6]:

Հայրենադարձութեան վերաբերեալ որոշումն անմիջապէս տարածում գտաւ սփիւռքահայութեան շրջանում: Որոշմանը ցնծութեամբ արձագանգեց Թաւրիզում հրատարակուող *Արեւելք* թերթը: Լուրն անմիջապէս տարածուեց թաւրիզահայերի շրջանում[7]:

Հայրենադարձութեանն աջակցող կոմիտէներ կազմակերպելուն առաջինը ձեռնամուխ եղան Իրանի հիւսիսային նահանգների հայերը: 1946 Փետրուարի 16ին Թաւրիզի հայ հասարակութեան ժողովն ընտրեց Ատրպատականի հայերի հայրենադարձութիւնը կազմակերպող 15 հոգանոց ներգաղթի յանձնախումբ՝ Բաբկէն Ղորուխչեանի նախագահութեամբ[8]:

Փետրուար-Մարտ ամիսներին ենթայանձնախմբեր ստեղծուեցին Մարաղայում, Ուրմիայում (Ռեզայէ), Սալմաստում եւ Ղարադաղում[9]:

Մարտին Թեհրանում ընտրուեց Իրանի հայերի ներգաղթին օժանդակող կենտրոնական կոմիտէ: Նրա իրաւասութեան մէջ էր մտնում հայրենադարձութեան առնչուող բոլոր հարցերի լուծումն Իրանում՝ բացառութեամբ Ատրպատականի, որն ունէր արդէն իր յանձնախումբը: Մարտի 31ին յանձնախմբի լիակազմ նիստում Թեհրանի կենտրոնական կոմիտէի նախագահ ընտրուեց Ռոման Իսաեւը, պատուաւոր նախագահ՝ Իրանահնդկաստանի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Կոստանեանը[10]:

Ամենայն հայոց կաթողիկոս Գէորգ Զ. Չորեքչեանը 1946 Ապրիլի 1ին համայն հայութեանն ուղղած օրհնութեան անդրանիկ կոնդակում, անդրադառնալով Խորհրդային Հայաստան ներգաղթել պատրաստուող գաղութահայութեանը, առաջ է քաշում վերջիններիս օժանդակութիւն տրամադրելու անհրաժեշտութիւնը[11]:

Թեհրանի յանձնախումբն իրեն ենթակայ յանձնախմբերն ունէր Արաքում (Սուլթանաբադ), Սպահանում, Համադանում, Մեշհէդում, Քերմանշահում, Ղազուինում, Փեհլեւիում, Շահրուդում, Ռաշտում, Սարիում, Ահուազում, Գորգանում, Ղարաղանում[12]:

---

[6] Նոյն, թ. 18:

[7] Հ. Փահլեւանեան, *Իրանահայ համայնքը (1941-1979)*, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1989, էջ 181:

[8] Նոյն, էջ 182:

[9] Հ. Մարտիրոսեան, «Իրանահայ գաղութի պատմութիւնից (նորագոյն շրջան)», *Մերձաւոր եւ Միջին Արեւելքի երկրներ եւ ժողովուրդներ, հտր. VIII. Իրան*, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1975, էջ 284:

[10] Նոյն:

[11] ՀԱԱ, ֆ. 454, g. 1, գ. 275, թ. 1:

[12] Նոյն, ֆ. 326, g. 1, գ. 135, թ. 1-2:

Արաքի ենթայանձնախումբը հիմնականում զբաղում էր Գեափլա, Քեամարա, Բուրվարի եւ Քեազազ գաւառների հայերի հայրենադարձութեան կազմակերպման գործով[13]:

Սպահանի ենթայանձնախմբի պարտականութիւնն էր նաեւ Փերիա եւ Չհարմիալ գաւառների հայերի հայրենադարձութեան կազմակերպումը[14]:

Յանձնախմբերն ու ենթայանձնախմբերը միաժամանակ բացատրական աշխատանք էին տանում հայրենադարձների շրջանում՝ նրանց ծանօթացնելով ՀԽՍՀ հասարակական կառուցուածքին, սահմանադրութեանը, կրթական գործին:

1946 Մայիսի 10ին Թեհրանից Թաւրիզ, այնտեղից էլ Խորհրդային Հայաստան մեկնեցին հայրենադարձութիւնն աւետող 11 ուսանողներ[15]:

Հայրենադարձների առաջին կարաւանը մեկնեց Արաքից: Չուշացան Թաւրիզից, Սպահանից, Թեհրանից եւ միւս շրջաններից մեկնողները:

Հայրենիք վերադարձան Փերիա գաւառի Ազնաւուլ, Ադիգան, Արթունաբաղ (Սելբարդի), Բժկերտ[16], Դաջան, Խոջիղալա (Խոջղալա), Մազրաբաղ եւ Նոր Մուղան գիւղերի հայերը: Փերիայից հայրենադարձուեցին 4404 հոգի (2009 հոգի՝ 8 գիւղերից, 2395՝ գաւառի միւս գիւղերից)[17]:

Քեարվանդ գաւառի հայերը եւս հայրենադարձուեցին[18]:

Համաձայն կենտրոնական յանձնախմբի կատարած աշխատանքի եւ որոշման՝ Չհարմիալ գաւառի ինը գիւղերի բնակչութիւնը ներառուած էր իրանահայութեան 1946ի հայրենադարձութեան ծրագրի մէջ: Փերիա գաւառի գիւղերի համեմատ՝ դա մեծ տոկոս էր կազմում: Հարցը վերաքննելու համար Թեհրան ուղարկուած Փերիայի ներգաղթի ենթայանձնախմբի բանագնացների բողոքի եւ դժգոհութեան արդիւնքում կենտրոնական յանձնախումբը որոշեց, որ Չհարմիալ գաւառի ինը գիւղերից վեցի բնակիչները պէտք է հայրենիք ներգաղթեն 1946ին, իսկ մնացեալ երեք գիւղերի բնակիչները՝ մէկ տարի անց՝ 1947ին: Վերջին երեք գիւղերի փոխարէն երեք գիւղ աւելացաւ Փերիա գաւառի գիւղերի հաշուին[19]:

Չհարմիալ-Բախտիարի նահանգապետը, ստանալով վարչապետ Ահմադ Ղաւաամ օս-Սալթանէի՝ արտագաղթողներին աջակցութիւն եւ ապահովութիւն շնորհելու մասին հեռագիրը, օժանդակեց արտագաղթի աշխատանքներին. ենթայանձնախմբի հետ զինուորական եւ քաղաքացիական

---

[13] Նոյն, թ. 1 շրջ.:

[14] Նոյն:

[15] *«Ռաֆֆի» գրպանի օրացոյց*, կազմեց՝ Տճ. Պօղոսեան, «Մոդերն», Թեհրան, 1946, էջ 23:

[16] Այն զուտ հայաբնակ գիւղ էր:

[17] Նոյն, ֆ. 465, ց. 3, գ. 29, թ. 59-61, 63. նաեւ՝ Փահլեւանեան, էջ 183-84:

[18] ՀԱԱ, ֆ. 465, ց. 3, գ. 29, թ. 65:

[19] Ա. Սարեան, *Պատմութիւն Չարմահալ գաւառի*, «Նայիրի», Թեհրան, 1980, էջ 622:

կցորդներ ուղարկեց գաւառ, զինուած պահակներ կարգեց վտանգաւոր վայրերում՝ ապահովելով գիւղացիութեան գաղթը դէպի Արաք[20]:

Ներգաղթող վեց գիւղերի հայ բնակչութիւնը 1946 Յունիսին վիճակագրական հետեւեալ պատկերն էր ներկայացնում. Վերին Քոնարք, Ներքին Քոնարք, Լիւասիան, Մամուռան, Աղբուլաղ եւ Սինագան գիւղերում բնակւում էր 254 տուն կազմող 1320 հայ, նրանցից 1265 ներգաղթողներին վերջին օրերին միացան քաղաքներից եկած 11 չհարմիալցիներ, եւ ընդհանուր թիւը դարձաւ 1276[21]:

Ըստ տոմարագրական վիճակացոյցի՝ Չհարմիալից 67 տոկոս ներգաղթողներն իրենք հոգացին իրենց ճանապարհածախսը, իսկ մնացեալ 33 տոկոսի ծախսերի համար «Չհարմիալ գաւառի հայ ուսումնասիրաց միութիւնը» յատկացրեց 140,000 ռիալ[22]:

Չհարմիալ գաւառի երեք գիւղերի հայ բնակիչները, որ, համաձայն ծրագրի, պէտք է ներգաղթէին 1947ին, ծանր վիճակում յայտնուեցին: Նրանց հրահանգուած էր շարունակել զբաղուել հողագործութեամբ մինչեւ հայրենադարձութեան պաշտօնական հաղորդագրութեան ստացումը՝ չվաճառելով իրենց ունեցուածքը, սակայն որոշ ընտանիքներ, ականատես լինելով ներգաղթող վեց գիւղերի կրած նիւթական վնասներին, ծախեցին իրենց գոյքը, որպէսզի անակնկալի չգան ներգաղթի ժամանակ: 1947ի հայրենադարձութիւնը տեղի չունեցաւ, իսկ յիշեալ գիւղերը հետզհետէ հայաթափուեցին: Եւ այսպէս՝ 1946ին Սիրաք, Հաջիաբադ եւ Մամուքա գիւղերի՝ 300 տուն կազմող հայութեան թիւը՝ 1080, աստիճանաբար նուազելով, 1949ին դարձաւ 836 (187 տուն), 1953ին՝ 693 (168 տուն), 1960ին՝ 287 (70 տուն), 1962ին՝ 171 (43 տուն), իսկ 1965ին՝ 86 (24 տուն)[23]:

Գաւառն անշքացաւ. հայաբնակ ինը գիւղերից վեցի հայութիւնը ներգաղթեց, մնացեալ երեքի բնակիչների հայրենադարձութիւնը կասեցուեց՝ պատճառելով նրանց հոգեբանական եւ նիւթական ծանր վնասներ: Աշխատանք գտնելու ակնկալիքով նրանց գերակշիռ մասը հեռացաւ գաւառից՝ հաստատուելով Խուզիստան նահանգի նաւթարդիւնաբերական շրջաններում (Աբադան, Մասջէդ-Սոլէյման, Ահուազ, Աղաջարի եւ Բանդար Մահշահր քաղաքներ), ինչպէս նաեւ Թեհրանում եւ Նոր Ջուղայում: Գաւառում մնացին քիչ թուով հայեր, ովքեր, սակայն, մշտական բնակիչներ չէին. ունենալով այգիներ եւ որոշակի քանակութեամբ ոչխարներ՝ ամռանը մնում էին գիւղում, ձմռանը՝ մեկնում քաղաք[24]:

---

[20] Նոյն, էջ 623:
[21] Նոյն, էջ 624-25:
[22] Նոյն, էջ 625:
[23] Նոյն, էջ 624, 640-41:
[24] Նոյն, էջ 640-41:

Իրանից հայերի հայրենադարձութիւնը պէտք է շարունակուէր նաեւ 1947ին:

1947ին արտասահմանի հայերի հայրենադարձութեան միջոցառումների վերաբերեալ զեկուցագրում նշում է, որ ըստ խորհրդային ներկայացուցչութիւններից եւ հայրենադարձութեանն աջակցող տեղական հայկական կոմիտէներից ստացուած տուեալների՝ տարբեր երկրներից Խորհրդային Հայաստան ներգաղթելու նպատակով ցուցակագրուել էր շուրջ 361,000 մարդ, որից 60,000ն Իրանից էր[25]: 1947ին նախատեսւում էր ցուցակագրուածներից 63,000 հայերի վերադարձը հայրենիք, այդ թւում՝ 20,000ն Իրանից[26]: Սակայն 1946ի վերջին եւ 1947ի սկզբին Իրանում ստեղծուած քաղաքական իրադրութեան հետեւանքով հայրենադարձութեան գործն ընդհատուեց[27]:

Յատկանշական է, որ 1947ին հայերի հայրենադարձման վերաբերեալ Իրանի իշխանութիւնների համաձայնութիւնը եղել էր Ապրիլի 9ին: Սակայն մօտ մէկ ամիս անց՝ 1947 Մայիսի 12ին, կառավարութիւնը որոշեց՝ արգելել Իրանից պարենային ապրանքների արտահանումը: Այս որոշումն ուղղակիօրէն ուղղուած էր Խորհրդային Հայաստան հայրենադարձողների դէմ, քանի որ վերջիններս զրկւում էին սեփական արտադրանքը դուրս հանելու իրաւունքից: Աւելի ուշ Իրանի առեւտրի նախարարութիւնը կարգադրեց անասունների արտահանումն արգելելու մասին: Այնուհետեւ, հակառակ իր ընդունած որոշումներին, կառավարութիւնն արգելեց հայերի մեկնումը Խորհրդային Հայաստան: Որպէս դրա հետեւանք՝ Իրանում ԽՍՀՄ հիւպատոսական բաժինը ծանուցում հրապարակեց 1947ին Իրնից հայերի հայրենադարձման աշխատանքների հարկադիր դադարեցման մսին[28]: Այս-պիսով՝ 1947-49ին Իրանից Խորհրդային Հայաստան հայերի ներգաղթ տեղի չունեցաւ[29]:

Նշենք, որ 1946ի հայրենադարձութեան մեկնարկից մինչեւ Նոյեմբերի 25 Սիրիայից, Լիբանանից, Իրանից, Բուլղարիայից, Ռումինիայից եւ Յու-

---

[25] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 196, թ. 5:

[26] Նոյն, թ. 6:

[27] Իրանի շահը եւ կառավարութիւնը հայերի եւ ներգաղթի նկատմամբ ցուցաբերում էին չէզոք դիրք: Սակայն խորհրդային զօրքերի ներկայութիւնն Ատրպատականում շիկացնում էր երկրի քաղաքական մթնոլորտը: ԽՍՀՄի նպատակն էր խորհրդայնացնել Ատրպատականը եւ այն անջատել Իրանից: Ճիշտ է, ըստ 1946 Ապրիլին կնքուած խորհրդա-իրանական համաձայնագրի՝ խորհրդային զօրքերը դուրս էին բերուել Ատրպատականից, սակայն 1947ին խորհրդա-իրանական դիւանագիտական յարաբերութիւնները խզուեցին (Ն. Ա. Սարգսեան, «Սփիւռքահայերի 1946-1948 թթ. զանգուածային հայրենադարձութեան նախապատրաստումը», *Բանբեր Երեւանի համալսարանի*, 3(90):1996, էջ 11):

[28] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 231, թ. 23:

[29] Նոյն, թ. 20:

նաստանից հայրենադարձուեցին 50,945 հայ (10,801 ընտանիք), որից 3870 ընտանիք կազմող 20,597ն Իրանից էր՝ կազմելով այդ երկրներից ներգաղթածների շարքում ամենաբարձր թիւը[30]: Մօտաւորապէս նոյնքան իրանահայեր էլ հեռացել էին իրենց տներից եւ տեղափոխուել հաւաքակայաններ հայրենադարձուելու համար, սակայն Իրանի կառավարութեան՝ նրանց ներգաղթելու թոյլտուութիւն տալ հրաժարուելուց յետոյ այդ խումբը մնաց Թեհրանում, Սպահանում եւ այլ քաղաքներում, որտեղ հիմնեց հայկական նոր թաղամասեր եւ բնակավայրեր[31]:

1946-49ին տեղի ունեցած հայրենադարձութեան ժամանակ Սիրիայից, Լիբանանից, Բուլղարիայից, Իրանից, Ռումինիայից, Յունաստանից, Ֆրանսայից, Եգիպտոսից, Պաղեստինից, Իրաքից, ԱՄՆից եւ Չինաստանից հայրենիք վերադարձաւ 89,637 հայ[32]: 1946ին Իրանից հայրենադարձուած հայերի թիւը այստեղ եւս բարձր ցուցանիշ էր գրանցում:

Յատկանշական է, որ արխիւային որոշ փաստաթղթերում հանդիպում ենք նաեւ 1946ին հայրենադարձուած իրանահայերի 20,707 թուին: Իրանում ԽՍՀՄ դեսպանութեան՝ 1946ին Իրանից Խորհրդային Հայաստան հայրենադարձութեան վերաբերեալ տեղեկանքում մասնաւորապէս նշւում է, որ 1946ին իրանահայերի հայրենադարձութիւնը գլխաւորապէս կատարուեց 4 շրջաններից՝ Սպահանի նահանգից, Սուլթանաբադից, Թեհրանից եւ Ատրպատականից: 1946 Յուլիսի 14-Նոյեմբերի 16՝ Իրանից Խորհրդային Հայաստան ներգաղթեց 20,707 մարդ, այդ թւում՝ 6630ը Սպահանի նահանգից (նրանցից աւելի քան 5000 գիւղացիներ Չհարմհալ եւ Փերիա գաւառներից էին), 6125ը՝ Սուլթանաբադի շրջանից (նրանցից շուրջ 5800ը՝ գիւղացիներ), 5580ը՝ Ատրպատականից, 1626ը՝ Թեհրանից, 366ը՝ Ղազուինից, 315ը՝ Քերմանշահից եւ Համադանից, 65ը՝ Մեշհէդից: Խորհրդային Հայաստան ներգաղթած 20,707 հոգուց շուրջ 17,000ը գիւղացիներն էին[33]: Սոյն թուական տուեալն է նշւում նաեւ մէկ այլ տեղեկանքում: Այսպէս՝ ըստ իրանահայերի հայրենադարձութեանն օժանդակող տեղական կոմիտէների տուեալների հիման վրայ կազմուած տեղեկանքի՝ Իրանում բնակուող 105,705[34] հայերից ներգաղթելու ցանկութիւն էր յայտնել 97,120ը, որից 20,707ը հայրենադարձուեց 1946ին[35]:

Միջազգային իրավիճակի սրման եւ մի շարք երկրների կառավարութիւնների քաղաքականութեան պատճառով, որոնք խոչընդոտներ էին

---

[30] Նոյն, գ. 139, թ. 7:

[31] Նոյն, գ. 422, թ. 11:

[32] Նոյն, գ. 257, թ. 2:

[33] Նոյն, գ. 137, թ. 23-24:

[34] Տեղեկանքի ծանօթագրութեան մէջ նշուած է, որ Իրանում բնակուող հայերի թիւը փաստացիօրէն աւելին է, քան ներկայացուած է տուեալ տեղեկանքում (նոյն, թ. 11):

[35] Նոյն:

ստեղծել հայերի հայրենադարձութեան համար, ԽՍՀՄ ղեկավար մարմինների որոշմամբ 1949ի վերջին դադարեցուեց հայրենադարձութիւնը[36]:

Խորհրդային Հայաստան վերադարձած աշխատունակ հայերն[37] աշխատանքի անցան հաւաքական եւ խորհրդային տնտեսութիւններում, շինարարութեան ու արդիւնաբերութեան մէջ, ինչպէս նաեւ ժողովրդական տնտեսութեան այլ բնագաւառներում: Հայրենադարձներին տրուեցին քաղաքական եւ քաղաքացիական բոլոր իրաւունքները՝ ստալինեան սահմանադրութեամբ հաստատուած, քանզի, համաձայն ԽՍՀՄ գերագոյն խորհրդի նախագահութեան 1946 Հոկտեմբերի 19ի հրամանագրի, բոլոր հայ վերաբնակիչները Խորհրդային Միութիւն ժամանելուն պէս դարձել էին ԽՍՀՄ քաղաքացիներ[38]:

1962-80ԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Հայրենադարձութիւնը, սակայն, որոշ ընդմիջումներով շարունակուեց նաեւ յետագայ տարիներին: Խորհրդային կառավարութիւնը, հաշուի առնելով արտասահմանի հայերի խնդրանքը, 1950ականներից թոյլատրեց հայերի առանձին ընտանիքների անհատական հայրենադարձութիւնը: 1953-58՝ տարբեր երկրներից անհատական հայրենադարձութեան եղանակով ՀԽՍՀ ժամանեց 3-4 հազար հայ[39]: Աւելի քան մէկ տասնամեակ տեւած (1950-61) անհատական հայրենադարձութեան փորձը ցոյց տուեց, որ ներգաղթի այդ եղանակը բազմահազար սփիւռքահայերի հայրենիք վերադառնալու համար արդիւնաւէտ լինել չի կարող: Ուստի ընդառաջելով նրանց ցանկութեանը՝ Խորհրդային Հայաստանի կուսակցական եւ պետական մարմինների միջնորդութեամբ ԽՄԿԿ կենտրոնական կոմիտէն եւ ԽՍՀՄ նախարարների խորհուրդը 1961 Օգոստոսի 12ին որոշում ընդունեցին նոր զանգուածային հայրենադարձութեան մասին[40]:

Նոր զանգուածային հայրենադարձութեան մասին ղեկավար մարմինների որոշումը մեծ խանդավառութիւն առաջացրեց սփիւռքահայերի շրջանում: Արտասահմանի հայերը մեծ խմբերով դիմում էին դրամատիրական երկրներում գտնուող խորհրդային դեսպանատներ ՀԽՍՀ հայրենադարձուելու համար գրանցուելու խնդրանքով[41]:

Իրանում ԽՍՀՄ դեսպան Ն. Պեգովը հաղորդում է, որ հայերի՝ հայրենիք վերադառնալու մասին երեւանեան ռադիոյի հաղորդումից յետոյ՝ հենց առաջին օրերին, սկսուեց իրանահայերի զանգուածային հոսքը տե-

---

[36] Նոյն, գ. 257, թ. 3:

[37] 1946ին հայրենադարձուած աշխատունակ 20,855 հայերից 8641ն Իրանից էին (նոյն, գ. 139, թ. 7):

[38] Նոյն, գ. 231, թ. 20:

[39] Նոյն, գ. 257, թ. 3:

[40] Փահլեւանեան, էջ 187-88:

[41] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 322, թ. 5:

ղի ԽՍՀՄ դեսպանութիւն՝ խնդրելով գրանցել իրենց հայրենադարձուելու համար: 2 օրուայ ընթացքում Իրանում ԽՍՀՄ դեսպանութիւնը ցուցակագրեց հայրենիք վերադառնալ ցանկացող 2000 հայ ընտանիքի: Յետագայ օրերին հայերի հոսքն այնքան մեծ չափեր էր ընդունել, որ Իրանի իշխանութիւնները խորհրդային դեսպանատան շէնքում կարգուկանոն հաստատելու համար առաջարկեցին ոստիկանական կարգախումբ տեղակայել[42]:

ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր ստեղծուած հայերի հայրենադարձութեան յանձնաժողովը միայն 1961ին ունեցաւ 9 նիստ, որտեղ քննուեց հայրենադարձութեան վերաբերեալ 202 հայ ընտանիքի խնդրագիր: Յանձնաժողովը թոյլատրեց արտասահմանեան երկրներից հայրենադարձուել ցանկացող 151 ընտանիքի (514 անձ) ներգաղթը: Յիշեալ ընտանիքների թւում 81ը (331 անձ) Իրանից էր[43]: Յանձնաժողովը տարբեր պատճառներով մերժեց մնացեալ 51 ընտանիքի (255 անձ) մշտական բնակութեան համար ներգաղթը ԽՍՀՄ: Մերժման գլխաւոր պատճառն այն էր, որ նրանց հարազատները չունէին բաւարար բնակտարածութիւն նրանց տրամադրելու համար, իսկ համապատասխան կազմակերպութիւնները հնարաւորութիւն չունէին բնակտարածութեամբ բաւարարել նրանց[44]:

1961-65՝ նախատեսւում էր հայերի զանգուածային վերադարձը ՀԽՍՀ. մշտական բնակութեան համար Սիրիայից, Լիբանանից, Եգիպտոսից, Իրանից, Կիպրոսից, Թուրքիայից, Իրաքից, Ուրուգուէյից, Արգենտինայից եւ այլ երկրներից ՀԽՍՀ էին վերադառնալու 40,000 հայեր: Փաստացիօրէն հայերի զանգուածային հայրենադարձութիւնը սկսուեց 1962ից: Ըստ ներգաղթի նախագծի՝ 1962ին նախատեսւում էր 5000 հայերի վերադարձն արտասահմանից, այդ թւում՝ 800ը Իրանից[45]:

ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարութիւնը հրահանգեց ԽՍՀՄ դեսպանութիւններին՝ ստանալ արտասահմանեան երկրների կառավարութիւնների համաձայնութիւնը հայերի հայրենադարձման, ինչպէս նաեւ հայերի ներգաղթի ուսումնասիրման եւ նախապատրաստման նպատակով Հայաստանի ներկայացուցիչներին այդ երկրներ ուղարկելու հարցերում[46]:

Յատկանշական է, որ հայրենադարձութեան ժամանակ իրանահայերը բախուեցին մեծ դժուարութիւնների: Իրանում քաղաքական իրավիճակն այդքան էլ բարենպաստ չէր հայրենադարձութեան համար: 1953ին տեղի

---

[42] Նոյն:
[43] Նոյն, գ. 327, թ. 15-16:
[44] Նոյն, թ. 16:
[45] Նոյն, թ. 4:
[46] Նոյն, գ. 322, թ. 6:

ունեցած հակադեմոկրատական յեղաշրջումից յետոյ Իրանում վերացան որոշ կուսակցութիւններ ու կազմակերպութիւններ, եւ նոր վարչակարգը հակախորհրդային դիրք գրաւեց[47]: Չնայած Իրանի վարչակարգն արտաքուստ դէմ չէր զանգուածային հայրենադարձութեանը, բայց պատկերը միանգամայն հակառակն էր: Իրանի իշխանութիւնները խօսքով համաձայնեցին իրանահայերի դէպի Խորհրդային Հայաստան զանգուածային ներգաղթին, բայց երբ դրա գործնական կազմակերպման համար Խորհրդային Հայաստանի նախարարների խորհրդի ներկայացուցիչները ժամանեցին Իրան, տեղի իշխանութիւնները ձգձգեցին հայրենադարձութեան հետ կապուած մի շարք հարցերի լուծումը (թոյլ չէին տալիս Խորհրդային Հայաստանի նախարարների խորհրդի ներկայացուցիչներին դուրս գալ քաղաք եւ շրջան, որտեղ հայեր էին ապրում, իրենց կազմում զինապարտ եւ մինչեւ 25 տարեկան անձ ունեցող հայ ընտանիքների եւ հարազատներ չունեցող անձանց Իրանի քաղաքացիութիւնից դուրս գալը ձգձգուեց, հրաժարուեցին թոյլ տալ հայերին մեկնել Ջուղայի սահմանային կէտով): Եւ այսպիսով՝ ներգաղթի ծրագրով նախատեսուած 800ի փոխարէն 1962ին Իրանից ԽՍՀՄ հայրենադարձուեց ընդամէնը 57 մարդ[48]:

Միեւնոյն ժամանակ իրանցիները հասկացրին, որ 1962ին, ի տարբերութիւն 1946ի, իրենք խստօրէն պահպանելու են Իրանի քաղաքացիութեան մասին 1937ի օրէնքը, ըստ որի՝ Իրանի քաղաքացիութիւնից հրաժարուելը թոյլատրւում էր միայն դիմողի անձնական խնդրանքով՝ խնդրանքի հիմնաւոր պատճառաբանութեամբ: Հայերի դիմումները Իրանի իշխանութիւնների կողմից պէտք է քննարկուէին նախքան նրանց՝ հայրենադարձութեան խնդրանքով դեսպանատուն դիմելը[49]:

ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարութեան Միջին Արեւելքի երկրների բաժնի վարիչ Գ. Զայցէփ՝ ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար Բ. Գ. Մարտիրոսեանին ուղղուած 1963 Փետրուարի 14ի գրութիւնը լոյս է սփռում հետեւեալ իրողութիւնների վրայ. Իրանում ԽՍՀՄ դեսպանութեան հաղորդման համաձայն՝ 1962ին դեսպանատանը կազմուեց եւ Իրանի ԱԳՆ ուղարկուեց Խորհրդային Միութիւն ներգաղթողների ցուցակը՝ 484 ընտանիք (2038 անձ) ընդգրկող: 1963 Յունուարի 15ի դրութեամբ իրանական կողմը սկզբունքօրէն համաձայնեց միայն 265 ընտանիքի Խորհրդային Միութիւն ժամանմանը, եւ ցուցակների յետագայ քննումը դադարեցուեց: Ընդ որում՝ 1963ին նրանցից 20 ընտանիքի (75 անձ) յաջողուեց դուրս գալ Իրանի քաղաքացիութիւնից[50]: Նման դրութիւնը բացատրւում

[47] Փահլեւանեան, էջ 188:
[48] ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 327, թ. 4-5:
[49] Նոյն, գ. 308, թ. 11:
[50] Նոյն, գ. 332, թ. 1:

էր նրանով, որ Իրանի իշխանութիւնները ոչ միայն չէին նպաստում հայերի հայրենադարձմանը, այլեւ ամէն կերպ խոչընդոտում էին այն:

Արհեստականօրէն ստեղծուել էր քաղաքացիութիւնից դուրս գալու բարդ ընթացակարգ (պահանջում էին իւրաքանչիւր անձի համար տրամադրել մինչեւ 90 լուսանկար, հարկերի վճարման տեղեկանք, զինուորական ծառայութիւնից ազատում եւն.): Քաղաքացիութիւնից դուրս գալու դիմումներ ներկայացնելու պահից մինչեւ հարցի վերջնական լուծումը անցնում էր 6-7 ամիս: Գրանցումը, որպէս կանոն, ուղեկցւում էր գումարի շորթմամբ եւ կաշառքով:

Քաղաքացիութիւնից հրաժարուող հայերը ենթարկւում էին խտրականութեան եւ հետապնդումների: Նրանց ազատում էին ծառայութիւնից, երեխաներին չէին ընդունում դպրոցներ, որոշ ընտանիքներում ոստիկանութիւնն անցկացնում էր խուզարկութիւն, առանձին անձանց նկատմամբ իրականացւում էր հսկողութիւն: Անվտանգութեան մարմիններում բազմաթիւ հայեր ենթարկւում էին հարցաքննութիւնների եւ վիրաւորանքների: Քաղաքացիութիւնից դուրս գալուց յետոյ հայրենադարձներից վերցնում էին բոլոր իրանական փաստաթղթերը, երկիրը լքելու համար տալիս սահմանափակ ժամկէտ՝ 7-10 օր[51]:

Ինչ վերաբերում էր գիւղական վայրերում ապրող հայերին, ապա նրանց դիմումը տեղական իշխանութիւններին՝ Իրանի քաղաքացիութիւնից հրաժարուելու խնդրանքով, առաջացնում էր ոստիկանական բացայայտ հետապնդում նրանց նկատմամբ՝ սպառնալիքներով եւ ծեծով ուղեկցուող: Խստիւ արգելւում էր դեսպանատան աշխատակիցների մեկնումը գիւղական վայրեր՝ հայրենադարձութեան գծով աշխատանքներ իրականացնելու[52]:

Երկաթուղով հայերի մեկնումը Խորհրդային Միութիւն չէր թոյլատրւում Ջուլֆայի սահմանային կէտով: Նրանք Իրանից կարող էին մեկնել Փեհլեւիի նաւահանգստով: Այդ հարցով դեսպանութիւնը բազմիցս դիմեց Իրանի ԱԳՆ, սակայն դրական արդիւնքի չյանգեց[53]:

Իրանում ԽՍՀՄ դեսպանութեան 1967 Օգոստոսի 3ի՝ Իրանից հայերի հայրենադարձութեան մասին տեղեկանքում նշւում է՝ «*ԽՍՀՄ դեսպանութեան եւ Իրանի ԱԳՆի միջեւ բանակցութիւնները ցոյց տուեցին, որ սկզբունքօրէն եւ արտաքուստ Իրանի կառավարութիւնը չի առարկում հայերի՝ ԽՍՀՄ ներգաղթին, միաժամանակ գտնում, որ այդ ներգաղթը չպէտք է անուանուի հայրենադարձութիւն, որովհետեւ դա, որպէս երեւոյթ*

[51] Նոյն, թ. 1-2:
[52] Նոյն, թ. 2:
[53] Նոյն:

եւ հասկացութիւն, դիպչում է իրանական պետութեան քաղաքական հեղինակութեանը»[54]:

Համաձայնեցուել է, որ իւրաքանչիւր անձ կամ ընտանիք պէտք է անձամբ դիմի իրանական կառավարութեանը քաղաքացիութիւնից դուրս գալու խնդրով եւ երկրից հեռանայ անհատապէս:

Ըստ սոյն համաձայնութեան՝ 1962-63ին հայ ընտանիքների առանձին խմբեր՝ իւրաքանչիւրում 20-25 անձ, կանոնաւոր կերպով Փեհլեւիի նաւահանգստով ՀԽՍՀ մեկնեցին: Յատկանշական է, որ նրանք ընտրում էին Իրանում ԽՍՀՄ դեսպանութեան հիւպատոսական բաժնի եւ Թեհրանում գտնուող հայրենադարձութեան հարցերով զբաղուող ՀԽՍՀ ներկայացուցիչների կողմից: Հայրենադարձուեց շուրջ 2500 անձ՝ բաղկացած 500 ընտանիքից: 1964ի սկզբին մի շարք գիւղերի բնակիչներ բազմաթիւ դիմումներ ուղարկեցին հիւպատոսական բաժին՝ խնդրելով արագացնել իրենց ներգաղթը[55]:

ԽՍՀՄ ԱԳՆ հիւպատոսական վարչութեան պետի տեղակալի՝ 1965 Յունուարի 22ին ՀԽՍՀ ԱԳ նախարարին ուղղած գրութեան մէջ նշւում է, որ Իրանում ԽՍՀՄ դեսպանութեան հիւպատոսական բաժինը 1964 Դեկտեմբերի 18ին նամակ է յղել ՀԽՍՀ նախարարների խորհրդին առընթեր արտասահմանից վերադարձող հայերի ընդունման եւ տեղաւորման կոմիտէին: Նամակում նշւում է, որ Իրանի իշխանութիւնները 1963ի աշնանից, ըստ էութեան, չեն թոյլատրում իրանահայերին հայրենադարձուել ԽՍՀՄ եւ համաձայն են հայերի՝ Իրանի քաղաքացիութիւնից դուրս գալու եւ մշտական բնակութեան համար ԽՍՀՄ ներգաղթելու անհատական եղանակին[56]:

Հայերի փոքր խմբերով հայրենադարձութիւնը կասեցուեց: Հաշուառուածների շրջանում առաջացան որոշակի դժգոհութիւններ: Գլխաւոր պատճառը 1964ի սկզբին խորհրդա-իրանական յարաբերութիւնների վատթացումն էր եւ Իրանի իշխող շրջանակներում տիրող հակախորհրդային տրամադրութիւնները[57]:

Ըստ Իրանում ԽՍՀՄ դեսպան Զայցէւի հաղորդման՝ Իրանի իշխանութիւններն ամէն կերպ բարդացնում էին հայերի՝ Իրանի քաղաքացիութիւնից հրաժարուելու ձեւակերպումները: Դեսպանի կարծիքով 1965ին պէտք չէ սպասել Իրանից ԽՍՀՄ մեծաթիւ հայերի ներգաղթ: Ըստ նրա՝ 1965ին հաւանաբար ԽՍՀՄ կը մեկնեն հայրենադարձների միքանի խմբեր՝ իւրաքանչիւրում 40-50 մարդ[58]:

---

[54] Նոյն, գ. 422, թ. 13:
[55] Նոյն:
[56] Նոյն, գ. 367, թ. 1:
[57] Նոյն, գ. 422, թ. 14:
[58] Նոյն, գ. 367, թ. 2:

Իրանում ԽՍՀՄ դեսպանութիւնը 1964-66ին մի շարք միջոցառումներ է ձեռնարկել եւ ստացել Իրանի կառավարութեան համաձայնութիւնը հայերի հայրենադարձութիւնը վերսկսելու հարցում՝ տեղի հայերի՝ Իրանի քաղաքացիութիւնից դուրս գալու եւ ԽՍՀՄ քաղաքացիութիւն ընդունելու վերաբերեալ նախկինում ձեռք բերուած պայմանաւորուածութեան խստիւ պահպանման պայմանով[59]:

Որպէս այդ բանակցութիւնների դրական արդիւնք՝ որոշուեց հայրենիք վերադարձնել Բոլորան եւ Հազարջրիբ գիւղերի ողջ բնակչութեանը՝ շուրջ 5000 մարդ, ինչպէս նաեւ ներգաղթողներին ՀԽՍՀ ուղարկել ոչ թէ Փեհլեւիով, այլ Ջուլֆայի կայարանով, ինչը շահաւէտ էր ինչպէս ներգաղթողների, այնպէս էլ ՀԽՍՀի համար: Բացի այդ պայմանաւորուածութիւն էր ձեռք բերուել, որ առանց ԽՍՀՄ դեսպանութեան պաշտօնական պատասխանի Իրանի կառավարութիւնը միանձնօրէն չէր կարող որոշել այս կամ այն անձի՝ ԽՍՀՄ ներգաղթելու նպատակով Իրանի քաղաքացիութիւնից դուրս գալու հարցը[60]:

1965ին հայրենադարձուեցին Ղարաղան գաւառի հայերը[61]:

1967ի սկզբին, ինչպէս ցոյց են տալիս հիւպատոսական բաժնի փաստաթղթերի ուսումնասիրութիւնը եւ ներգաղթելու համար ցուցակագրուած անձանց վկայութիւնները, Թեհրանի հայ բնակչութեան նշանակալի մասը գաղտնաբար եւ ինքնակամօրէն դիմել է իրանական կառավարութեանը քաղաքացիութիւնից դուրս գալու համար[62]:

1967 Յունուար-Մարտ ամիսներին ուսումնասիրուել եւ ընտրուել է 195 ընտանիք (1200 անձ), ովքեր ՀԽՍՀ նախարարների խորհրդի կառավարական յանձնաժողովի ընդունումից յետոյ սկսեցին Իրանի քաղաքացիութիւնից դուրս գալու ձեւակերպումները:

1967 Օգոստոսի 1ին Իրանից մեկնեց 90 ընտանիք (680 անձ), մնացեալը մեկնելու էին Օգոստոս-Սեպտեմբերին[63]:

Իրանում ԽՍՀՄ դեսպանութեան հիւպատոսական բաժնի վարիչի տեղեկանքը՝ 1967ին հայերի՝ Իրանից ՀԽՍՀ հայրենադարձութեան արդիւնքների մասին, տալիս է հետեւեալ տեղեկութիւնները. 1967ին մշտական բնակութեան համար ՀԽՍՀ մեկնեց 677 անձ: Իսկ 1966ին Իրանից ՀԽՍՀ էր մեկնել 55 մարդ[64]:

Հայրենադարձութեան կոմիտէի նախագահի տեղակալ Հ. Այվազեանի՝ 1968ին ՀԽՍՀ ԱԳ նախարար Մարտիրոսեանին յղած տեղեկանքների համաձայն՝ 1968 Հոկտեմբերին Իրանից Խորհրդային Հայաստան է ներգաղ-

---

[59] Նոյն, գ. 422, թ. 16:
[60] Նոյն, թ. 17:
[61] Նոյն, ֆ. 465, ց. 3, գ. 29, թ. 62:
[62] Նոյն, ֆ. 326, ց. 1, գ. 422, թ. 17:
[63] Նոյն:
[64] Նոյն, թ. 26:

թել 60 ընտանիք (311 մարդ)[65], Նոյեմբերին՝ 60 ընտանիք (320 մարդ)[66], իսկ Դեկտեմբերի երեք շաբաթների ընթացքում՝ 16 ընտանիք (67 մարդ)[67]:

1960ականներին հայրենադարձուեցին Փերիայի Հազարջրիբ, Չիգեան, իսկ արդէն 1970ականներին՝ Խունգ, Ղալամելիք, Միլակերտ, Նամակերտ, Շահբուլաղ, Շուրիշկան, Սանգիբարան գիւղերի հայերը[68]:

Սակայն փերիահայերի հայրենադարձուելուց յետոյ գաւառն ամբողջութեամբ չի հայաթափուել: Բանահաւաք Ծատուր Զարգարեանի վկայութեամբ՝ 1970ականներից մինչեւ 1987 որոշ թուով հայեր բնակւում էին Փերիայի Բոլորան, Խոյգան, Հադան, Ղալամելիք, Ղարղուն, Նամակերտ, Սանգիբարան, Սնկերտ եւ Սուարան գիւղերում, որտեղ 1987ին նրանք ապրում էին պարսիկների հետ խառը, բայց արդէն աւան-քաղաքատիպ կենցաղով[69]:

Չնայած ստեղծուած դժուարութիւններին՝ Իրանում խորհրդային դեսպանատան հետեւողական ջանքերի շնորհիւ 1962-67՝ հայրենիք վերադարձաւ 2699 իրանահայ[70]:

Մելիքսէթեանի ներբերած տուեալների համաձայն՝ 1962-82՝ 30 երկրներից հայրենադարձուած 31,920 հայերից (6795 ընտանիք) 24,283ն իրանահայեր էին (5039 ընտանիք)[71]՝ կրկին կազմելով հայրենադարձուածների ընդհանուր թուի գերակշիռ մասը:

Իրանում ԽՍՀՄ դեսպանի՝ իրանահայերի հայրենադարձութեան մասին 1986 Մայիսի 10ի տեղեկանքը հաղորդում է, որ ԽՍՀՄ դեսպանութեան հիւպատոսական բաժինը շարունակում էր ստանալ ներգաղթել ցանկացողների մեծաքանակ դիմումներ: Այսպէս՝ 1985ին ստացուել է 160 նման դիմում-խնդրագիր, իսկ 1986 Յունուարից Ապրիլ ընկած ժամանակաշրջանում՝ 44[72]: Նոյն թուականի յետագայ ամիսներին շարունակաբար եղել են նման դիմումներ[73]: Նշենք, որ տեղի է ունեցել նաեւ հետեւեալ իրողութիւնը. 1982-85՝ Իրանից ՀԽՍՀ ներգաղթած 132 մեծահասակ եւ 80 մանկահասակ հայեր ցանկութիւն են յայտնել վերադառնալ Իրան[74]:

Ուշադրութեան է արժանի հայրենադարձուել ցանկացողների խնդրագրերի եւ ՀԽՍՀում մշտական բնակութեան համար փաստացի ներգաղ-

---

[65] Նոյն, ց. 2, գ. 126, թ. 20:
[66] Նոյն, թ. 11:
[67] Նոյն, թ. 9:
[68] Նոյն, ֆ. 465, ց. 3, գ. 29, թ. 61-64:
[69] Նոյն, թ. 7:
[70] Յ. Մելիքսէթեան, *Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները եւ հայրենադարձութիւնը (1920-1980 թթ.)*, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1985, էջ 279:
[71] Նոյն, էջ 299-301:
[72] ՀԱԱ, ֆ. 326, ց. 8, գ. 25, թ. 4:
[73] Նոյն, թ. 9, 19:
[74] Նոյն, թ. 9:

թածների քանակի ներհակ լինելը[75]: Այսպէս՝ 1983ին Իրանից ԽՍՀՄ տեղափոխուեց 196 հայ, 1984ին՝ 152, 1985ին՝ 65, իսկ 1986 Յունուար 1-Դեկտեմբերի 1 ժամանակաշրջանում Իրանից ԽՍՀՄ տեղափոխուեց ընդամէնը 37 իրանահայ: Դա այն պարագայում, երբ հայրենադարձուելու համար ամէն տարի դիմում էր շուրջ հազար մարդ[76]:

Իրանից ներգաղթած հայերի հոծ զանգուածները վերաբնակեցուեցին ՀԽՍՀ մի շարք բնակավայրերում՝ Կիրովականում (այժմ՝ Վանաձոր), Լենինականում (այժմ՝ Գիւմրի), Սեւանում, Հրազդանում, Չարենցաւանում, Աբովեանում, Երեւանում, Մասիսում, Արարատում, Արտաշատում, Դուինում, Վեդիում, Էջմիածնում, Աշտարակում, Հոկտեմբերեանում եւ այլուր[77]:

Իրանից հայրենադարձուած շատ ընտանիքներում պահպանւում են իւրօրինակ սովորոյթներ, ծէսեր, բարբառներ, հնատիպ գրականութիւն, պատմաազգագրական արժէքի փաստաթղթեր, կոնդակներ, եզակի ձեռագրեր, թանգարանային ուշագրաւ մասունքներ: ՀՀ ԳԱ հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտում եւ պատմութեան պետական թանգարանում կենտրոնացուեցին փերիահայ ընտանիքներում պահպանուած ազգագրական նիւթերը, կենցաղամշակութային այլաբնոյթ արժէքները[78]:

1981-87ին հայրենադարձ իրանահայերի ստեղծած «Փերիա» (1981), «Ջուղա» (1986) երգ ու պարի, «Չհարմիալ» (1983) եւ «Կապուտան» (1987) պարի խմբերի քրտնաջան աշխատանքի շնորհիւ կորստից փրկուեց եւ գիտական շրջանառութեան դրուեց 35 նմուշ երգ, պարերգ, ծէսեր, մեղեդի, պարեր, Փերիայի, Չհարմիալի եւ Ուրմիայի նոր վերականգնուող ազգային տարազի ձեւեր եւ զարդաձեւեր, երաժշտական նուագարաններ[79]:

ԻՐԱՆԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹԵԱՆԸ ՑՈՒՑԱԲԵՐՈՒԱԾ ԱՋԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Բազմաթիւ հայ հասարակական կազմակերպութիւններ, հայերի հայրենադարձութիւնը համարելով համազգային գործ եւ հայութեան դարաւոր իղձերի իրականացում, դրական դեր խաղացին հայերի հայրենադարձութեանն աջակցութիւն եւ օգնութիւն ցուցաբերելու գործում: Թեհրանի համահայկական երիտասարդական «Մշակոյթ» միութիւնը, որն ունէր 600 անդամ, հայրենադարձութեան հիմնադրամի օգտին կազմակերպեց մի շարք վճարովի երեկոյթներ, զօրաշարժեց իր անդամներին՝ օգնելու հայերի ներգաղթը ղեկավարող կազմակերպութիւններին, ինչպէս նաեւ

[75] Նոյն, թ. 19:
[76] Նոյն, թ. 19-20:
[77] Նոյն, ֆ. 465, ց. 3, գ. 4, թ. 10 շրջ.-11:
[78] Նոյն, թ. 70:
[79] Նոյն, թ. 60, 62-65:

մեծ քարոզչական աշխատանք կատարեց հայերի շրջանում, ովքեր պէտք է մեկնէին Խորհրդային Հայաստան[80]:

Նիւթական մեծ օգնութիւն տրամադրեց Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը (ՀԲԸՄ): Հայրենադարձութեան գործին մեծ աջակցութիւն ցուցաբերեց Թեհրանի «Հայ համալսարանականների ընդհանուր միութիւն»ը, որը զօրաշարժեց բազմաթիւ բժիշկների՝ հայրենադարձների բուժօգնութեան համար[81]:

Հայրենադարձութեան գործում մեծ էր նաեւ հայ մամուլի խաղացած դերը՝ ի դէմս Թեհրանում լոյս տեսնող *Վերածնունդ*, *Աշխատանք* եւ Թաւրիզում լոյս տեսնող *Արեւելք* թերթերի: Այս երեք թերթերը կոչ էին անում հայերին համախմբուել հայ հասարակական կազմակերպութիւնների շուրջ՝ հայերի հայրենադարձութիւնը Խորհրդային Հայաստան լաւ կազմակերպելու համար: Թերթերը լայնօրէն անդրադարձել են հայերի հայրենադարձութեան ընթացքին[82]:

Տեղական ենթայանձնախմբերը զբաղւում էին հայերի՝ Իրանի քաղաքացիութիւնից հրաժարուելու փաստաթղթերի վարչական ձեւակերպման, հայրենադարձների ցուցակների կազմման, կամաւոր նուիրատուութիւնների հանգանակութեան, փոխադրամիջոցի կազմակերպման, ֆինանսաւորման եւ այլ աշխատանքներով: Այդ հարցերում զգալի դեր խաղաց նաեւ Իրանի հայերի ներգաղթին օժանդակող Թեհրանի կենտրոնական կոմիտէն, որը հայերի հայրենադարձութեան կազմակերպման հիմնական ղեկավար կենտրոնն էր: Յատկապէս հարկ է նշել, որ կոմիտէի նախագահ Իսաեւը, օգտագործելով իրանական շրջանակների հետ ունեցած իր լայն կապերը, մեծապէս նպաստեց հայերի ներգաղթի յաջող կազմակերպմանը: Նա առաջիններից էր, որ հայերի հայրենադարձութեան հիմնադրամին 150 հազար ռիալի ներդրում կատարեց[83]: Յատկանշական է, որ Իսաեւը 1946 Յուլիսին եւ Նոյեմբերին Ստալինին յղած հեռագրերում, ուրախութեամբ եւ ոգեւորուածութեամբ խօսելով իրանահայերի հայրենադարձութեան մեկնարկի մասին, Իրանի ողջ հայութեան երախտագիտութիւնն է յայտնում նրան: Այնուհետեւ յաւելում, որ խորհրդային կառավարութեան որոշումը հայ ժողովրդի պատմութեան մէջ բացեց նոր էջ, եւ ի կատարումն այս պատմական որոշման՝ Թեհրանի կենտրոնական կոմիտէն Իրանի բազմաթիւ առաջադէմ կազմակերպութիւնների աջակցութեամբ ձեռնամուխ եղաւ հայերին Խորհրդային Հայաստան ուղարկելու գործին[84]:

---

[80] Նոյն, ֆ. 326, ց. 1, գ. 137, թ. 31:
[81] Նոյն:
[82] Նոյն, թ. 29-30:
[83] Նոյն, թ. 31-32:
[84] Նոյն, թ. 1-2:

Իսաեւը 1946 Յուլիսին Իրանի վարչապետ Ղաւամ օս-Սալթանէին հեռագրում է, որ Իրանից Խորհրդային Հայաստան ներգաղթող հայերը յանձնարարել են պատուատր պարտատրութեամբ յայտնել իրենց ջերմ եւ սրտագին երախտագիտութիւնը՝ ներգաղթի հետ կապուած հարցի լուծման մէջ իր ունեցած մասնակցութեան համար[85]:

Իրանից Խորհրդային Հայաստան հայերի ներգաղթի կազմակերպման գործում իրենց մեծ դերակատարումն ունեցան նաեւ Իրանում ԽՍՀՄ դեսպանութիւնը, հիւպատոսական հիմնարկութիւններն ու Հայաստանի նախարարների խորհրդի ներկայացուցիչներ Քալանթարն ու Ղազարեանը[86]:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Պէտք է նկատել, որ, չնայած իրանական կառավարութեան յարուցած սահմանափակումներին ու խոչընդոտներին, ամենամեծ ներգաղթը կատարուեց Իրանից:

Ներգաղթից յետոյ իրանահայ գիւղական բնակչութիւն գրեթէ չմնաց. մասամբ տեղափոխուեց Հայաստան, մասամբ էլ քաղաքայնացման բուռն գործընթացի հետեւանքով ամբողջապէս հաստատուեց քաղաքներում, մասնաւորապէս Թեհրանում: Այժմ հատուկենտ հայկական գիւղեր են մնացել երկրի հարաւում՝ Փերիայի գաւառում, հիսիսում՝ Ատրպատական նահանգում, եւ կենտրոնական տարածաշրջանում[87]: Այդ գիւղերի հայերը գլխաւորապէս զբաղուած են այգեգործութեամբ, հացահատիկային մշակաբոյսերի աճեցմամբ, մեղուաբուծութեամբ, մասամբ նաեւ անասնապահութեամբ, կանանց շրջանում՝ գորգագործութեամբ:

Հապշտապ կազմակերպուած հայրենադարձութիւնն ունեցաւ որոշ թերութիւններ, որոնք տնտեսապէս եւ հոգեպէս ծանր հետեւանքներ ունեցան ներգաղթողների վրայ:

Հակառակ այն երաշխիքների, որ արտասահմանի բոլոր հայերը, անկախ սեռից, կրօնից, դաւանանքից, կուսակցական պատկանելիութիւնից կամ քաղաքական որեւէ համոզմունքից, հրաւիրում էին հայրենիք, դաժան գործընթաց սկսուեց կուսակցական որոշ մարդկանց նկատմամբ: Նրանց պարտադրուեց ստորացնող հրաժարականներով հանդէս գալ մամուլում՝ դատապարտութեան խօսք ասելով իրենց կուսակցութեան՝ ՀՅԴի հասցէին[88]:

Հայրենադարձների՝ հայրենիքի մասին լսածներն ու պատկերացրածները չէին համապատասխանում իրականութեանը: Դա հայրենադարձու-

---

[85] Նոյն, թ. 8:

[86] Նոյն, թ. 35:

[87] Վ. Բայբուրդեան, *Իրանն այսօր (տեղեկատու)*, «Վահան», Երեւան, 1999, էջ 295:

[88] Սարեան, էջ 628-29:

թեան վատ կազմակերպման, նախապատրաստական աշխատանքներում թերանալու արդիւնք էր, ինչը քննարկւում ու գնահատական էր ստանում ե՛ւ Խորհրդային Հայաստանի, ե՛ւ ԽՍՀՄ ղեկավար մարմիններում:

Այնուամենայնիւ, հայրենադարձուել ցանկացողների հոսքը շարունակւում էր: Չնայած հարիւրհազարաւոր սփիւռքահայեր սպասում էին Խորհրդային Հայաստան տեղափոխուելուն, հայրենադարձութիւնն աստիճանաբար մարեց եւ իվերջոյ դադարեց, որովհետեւ ե՛ւ ԽՍՀՄի, ե՛ւ Խորհրդային Հայաստանի ղեկավարների համար տեսանելի եղաւ ձեռնարկուած գործի եւ իրական հնարաւորութիւնների անհամապատասխանութիւնը:

Իրանից, ինչպէս նաեւ արտասահմանեան այլ երկրներից հայերի հայրենադարձութեան շնորհիւ Հայաստանն ունեցաւ բնակչութեան զգալի աճ, ձեռք բերեց հմուտ մասնագէտներ եւ մտաւորական ներուժ:

THE REPATRIATION OF IRANIAN ARMENIANS BETWEEN 1946 AND THE 1980S

(SUMMARY)

ASTGHIK HAKOBYAN
astghikhakobyann@gmail.com

The Victory of the Soviet Union in WWII ushered in the chance of massive repatriation of Armenians living abroad.

Between May and November 25, 1946, 3870 families (20,597 individuals) repatriated to Soviet Armenia. Repatriation stopped for the next three years.

The number of repatriated Iranian Armenians constituted a significant percentage of the total of 89,637 Armenians repatriated from abroad between 1946 and 1949.

Repatriation from Iran continued in later years with certain interruptions. Between 1953 and 1959 some three to four thousand Armenians repatriated from different countries to Soviet Armenia.

The mediation of the Soviet Armenian Communist Party and Soviet Armenian state authorities led to the Central Committee of the Communist Party of the Soviet Union and the Soviet government adopting a decision on August 12, 1961 for a massive new repatriation.

Between 1962 and 1982, 31,920 Armenians (6795 families) were repatriated from 30 countries, including 24,283 (5039 families) Iranian Armenians. Once more, the Iranian Armenians constituted a significant proportion of the total repatriated Armenians.

The paper focuses on the repatriation of the Iranian Armenians to Soviet Armenia, their points of departure from Iran, the villages and towns they vacated, the policies adopted by the Iranian authorities regarding repatriation and the settlement and integration of the Iranian Armenians in Soviet Armenian society and life.